ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Փ. Բուզանդի փ. 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք, էլ. փոստ:gnumner.kanach@yerevan.am

Ք. Երևան 16 հունվարի 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԾԱԾԿԱԳԻՐ՝ ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-24/35

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «ՇԵՆ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 08.07.2024թ. կնքված «ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-24/35-6» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցերով նախատեսված ապրանքները: Ընկերությունը խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ ամբողջությամբ չի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները:

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը՝ ղեկավարվելով գնումների մասին օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 2.1.7 կետի պահանջներով՝ միակողմանի /մասնակի/ լուծել է կնքված Պայմանագիրը: Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի հունվարի 08-ին և Պայմանագիրը հունվարի 9-ի դրությամբ համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝ «ՇԵՆ-ԴԵԿՈՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԲԵԳՈՅԱՆ